ՎԵՀԱՓԱՌԸ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հունիսի 11-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական Տանը, այցելություն տվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ մեծահարգ տիար Ֆադեյ Սարգսյանին, ընկերակցությամբ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Հ. Պարսամյանի:

Վեհափառ Հայրապետի և Մինիստրների խորհրդի պարոն նախագահի միջև տեղի ունեցավ սիրալիր, բարեկամական զրույց, ջերմ մթնոլորտում, որին ներկա էր նաև Մինիստրների խորհրդի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ Վ. Գ. Ազարյանը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր, որպես գավազանակիր, Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը: